

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ազգութիւն—25 բուրլի նշանակելով: Այ մի կարգէ
ուորեսը ուսուցիչ յանձն չի առնի այդ ամա-
նի կանոն ծառայելու, իսկ անկարգ ուսուցչին շի-
կօպէկ տալն էլ մեղք է: «Այ թամա՜ չօք զա-
րար» ասում է թրքական առածը, և արդունցի-
որ աշնքան խնայող է ամեն բանի մէջ ընդհան-
րապէս, շատ սխալ է իր անօտանդիտական հա-
շիւները մէջ, այս խնդրում Հմուտ ուսուցչին վե-
ճարած 1 կօպէկը կուենայ իր օգուտը, իսկ տ-
նայանքին կամ նրա նման մի դասատուին տու-
կէս կօպէկը չէ թէ միայն բոլորովին կորուստ
վան զի իր դասակը տարիների ընթացքում բազ-
այնութենից ուրիշ ոչինչ կը սովորի, այլ և նա կ-
կորցնէ այդ տիրացուական դպրոցում, ամեն-
թանգագին բանը, որ է ժամանակը, նա կը բ-
թանայ և նշանովեւ ու տղայ դարձած, զար-
մի-ցից ելած ժամանակ նա հայելու երկու խօսք, և
ևնր էլ բուն արդուկնցող լեզուով, գրելու կարող
է լինի, իսկ մտաւոր զարգացում երբեք չի ունե-
նէ: Արդեօք աւելի լաւ է փթած չալից հագու-
կարովիւն, էփան է ասելով, քան թէ նոր և դ-
մացիկուն չալից: Կէ որ փթածը էփան է, բա-
մէկ ամիս միայն կը դիմանայ, իսկ նորը, ամս-
ան, թէ և համեմատաբար աւելի թանկ է, բայց մ-
տարի կերթայ: Հիշե՛ր այդ է նաև հին և նոր
ուսուցչի տարբերութիւնը: Հին ձեռն ուսուցի-
կի մի կը կարգացնէ, բայց նրա տուած ուսումը հին
ընէ փթած է իրան պէս, շուտով կը մաշվի և ն-
րում կայ ժամանակի պայմանների մէջ ընաւ օգ-
հար-չի բերի, ուր որ նոր մէթոդով դաս աւանդող
ընէ սուցիչը, թէպէտ 400—600 բուրլի պահան-
տաւ-բայց իր տուած ուսումը չի կորչի, արդինք
տալ և իրական կենսիկ մէջ էլ օգուտ
կն-բերէ: Արդունցիւն, կամ դասուսացին, չ-
աւաղի կարող լինի թէ նոր եղանակի բարեձ-
թիւնը չէ հասկանում, քանի որ նա սկսու-

U.

շատ անտեղի կերպով Բաւական չէ, որ ընկե-
րութիւնը այսուհետեւ Տէր-Ներսէսեանցին նպաստ
չէ տալու, այլ հարկաւոր է հաստատ վճռել, թէ
արդեօք յիշեալ պարտքը ընկերութեան մոլորե-
ցեալ է թէ ոչ: Եթէ ոչ, ինչո՞ւ ուրեմն չը շարու-
նակել նպաստ տալ մի վանական դպրոցին, որին
քանի տարիներ շարունակ տուած է: Իսկ եթէ
ընկերութիւնը խաբարած է, պէտք է որ յանցա-
ւորը պատժվի զոնէ հասարակական կարծիքի
առջև: Լուսկեան տալ այդ բանը չէ կարելի....

Ի վերջոյ ժողովը անցաւ ընդհանուր ժողովի
անունով ստացված խնդիրներին: Վարսի հայոց
վիճակի փոխանորդ Յուսիկ վարդապետը խնդրում
է ընկերութիւնից տարեկան 300 ռուբլի նպաստ
նշանակել կաղզուանի դպրոցին: Արդահանի
դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է ընկերու-
թիւնից նպաստ նշանակել յիշեալ տեղի դպրո-
ցին: Երկու խնդիրներն էլ մերժվեցան փող չը
լինելու պատճառով:

Վերջացնելուց առաջ չինք կարող չը նկատել,
որ այս տարի ժողովին ներկայ գտնվողները
առանձնաբերական վերաբերվեցան դէպքի ժողովի
պարագմունքները, և տարին մի անգամ կայա-
ցող ընդհանուր ժողովը ոչ մի առանձին կենդա-
նութիւն և ոչ էլ մի առանձին հետաքրքրութիւն
չունեցաւ....

Ս. Թ.

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇՈՒՑ ստացած մեր տեղեկութիւններից ե-
րևում է, որ այդ քաղաքի հայ հասարակութեան
մէջ մեծ տարածություն ունենւն եւ սկսված տեղա-
կան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնը չը
վաւերացնելու պատճառով: Տեղի եւ ունեցել մի
քանի աղմկալի ժողովներ: Ժողովրդի պահանջի
համաձայն դպրոցապետական փողերը չեն յանձն-
ված կոմսիտորիային, այլ պահ են տրված ար-
քունական գանձարանին: Ժողովրդի նպատակն է
պաշտպանել իր ընտրողական խթանները:

ՏԱՄԲՈՒՑ հեռագրում են Հիւսիսային գոր-
ծակալութեան, որ յունվարի 31-ին սկսեց ըն-
նակել Տամբուի նահանգական դատարանում, Չայ-
կովսկու նախագահութեամբ, քաղաքի փոխա-
ղարձ կրէդիտի ընկերութեան մէջ կատարված
զեղծումները: Մեղադրվում են ընկերու-
թեան վարչութեան նախագահ՝ Օդնորիին, վար-
չութեան երկու անդամներ և վարչութեան գրա-
պահը: Կանչված են 56 վկաներ և 2 էկսպերտ-
ներ:

ԱՄԱՆԻՍԻՑ մեզ գրում են. «Յունվարի 22-ին
նշանակված էր դումայի յատուկ նիստ, հանգու-
ցեալ կոմս Ղորիս-Մելիքովի յիշատակը արժա-
նակալ տօնելու համար կարդադրութիւններ ա-
նելու: Գուման, նախ և առաջ ոտքի կանգնելով
յարգեց հանգուցեալի յիշատակը. միաձայն վրձ-
նվեց, որ Անալիսայի կողմից իբրև պատգամա-
ւոր ներկայ լինի քաղաքապետին պ. Մուլթաֆեան
և մի մեծագին պսակ դրվի հետեւալ վերտառու-
թեամբ «Достоинному достойнѣйшему». Թաղման
օրը, այստեղ ս. Փրկիչ եկեղեցում վճռվեց կա-
տարել հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ
բոլոր իրաւասունների ներկայութեամբ, նախապէս
յայտնելով պ. գաւառապետին և քաղաքի ընդ-
հանուր հասարակութեանը»:

Մեզ գրում են ԱՄԱՆԻՍԻՑ հետեւեալը. «Յուն-
վարի 29-ին Բարեգործական ընկերութեան Ախալ-
ցխայի բաժնի ընդհանուր ժողովը չը կայացաւ ան-
դամների որոշեալ թվի ներկայ չը լինելուն համար:
Ժողովի խորհրդածութեան ենթարկվելու էին՝ 1)
բաժնի երկամական նախահաշիւ ընդթելիւնը և հաս-
տատրութիւնը 2) մի խնդիր, աղքատ արհեստաւոր
մի ուսանողի համար օժանդակելու առաջարկու-
թիւն և 3) ուսուցիչներ Մատինեանի և Պապեա-
նի յայտարարութիւնը, որով յիշեալ պարոնները
առաջարկում են բանալ Ախալցխայում հասարա-
կական ընթերցարան, ընտրել մի մասնագիտով
ընթերցարանի կանոնադրութիւնը խմբագրելու և
կարգադրելու իրանց մօտ գտնված 175 ռուբլի
արժողութեամբ գրքերը և 107 ռուբլի դրամա-
գրքերը, որ իրանք մի քանի ակադեմիկոսներին տա-
նալով հետ հաւաքած ունեն «աւետիս» ման-
գալով և զանազան անձերից նուրբած ենթագրե-
լի ընթերցարանի համար ընկերութեան վարչու-
թեան թոյլտուութեամբ: Գործադրաբար երէկվայ
ժողովը չը կայանալով, յիշեալ կարեւորագոյն
հարցերը չը կարողացան աստանալ իրանց լուծու-

մը: Երկրորդ անգամ ժողով հրաւիրելը, հաւա-
նական է, որ կայանալու է առաջիկայ կիրակի
օրը, փետրվարի 5-ին»:

Ներսիսեան դպրոցի վերջին տեսուչ Սարգիս
քահանայ Բէգնազարեանի տեսչական պաշտօնը
թողնելուց յետոյ, տեսչի պաշտօնը կատարում է
այդ դպրոցի նախկին վերակացու պ. Ամբրան
Մանդինեան:

Պետերբուրգի բոլոր դիմագրաններում և միջ-
նակարգ դպրոցներում այժմ երեք հոգուց բաղ-
կացած մի յանձնագիտով մանրամասն քննութիւն
է անում, թէ ինչ դրութեան մէջ է սաների ա-
ռողջութիւնը և ֆիզիկական զարգացումը:

Յայտնի է որ իշխան կառավարչապետ Դոն-
դուկով-Կորսակով այժմ Պետերբուրգում է: Տեղա-
կան ուսու պաշտօնական լրագիրը հաղորդում է,
որ իշխանը Թիֆլիս պիտի վերադառնայ մեծ-
պատի երկրորդ շաբաթուն:

Թիֆլիսում յայտնի մի երգչուհի, օրիորդ Աս-
լամազեան, որը վերջին ժամանակներս երգում
էր Պետերբուրգում, երգիչները զանազան խմբե-
րում, այժմ գտնվում է Միացեալ-Նահանգներում՝
Նիւ-Եորկում, ուր մասնակցում է ուսու երգիչների
խմբի մէջ: Այդ խումբը, ինչպէս հաղորդում են
Նիւ-Եորկից մայրաքաղաքներ լրագրներին, բաղ-
կացած լինում անշուք և անպատրաստ երգող-
ներէից, շատ էլ լաւ տպաւորութիւն չէ թողնում
Նիւ-Եորկի հասարակութեան վրա:

Վերջին երկու օրերի ընթացքում Թիֆլիսում
կատարեալ դարձանային եղանակ է: Քաղաքի
փողոցներում, գլխաւորապէս Գոլովինսկի պրօս-
պեկտի վրա ահագին բազմութիւն է զբոսնում.
Իրիտ ցրտերից յետոյ ամենքը շտապում են մի
փոքր դարձանային եղանակ վայելել. նոյն իսկ
Մուշաթիլ բաւական զբօսնողներ են գնում:

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Տեղական դպրոց
հիմնելու մասին յայտնաբացները սկզբում ցոյց
տուած եւսանող անցաւ, և այժմ երբ խօսքը գործ-
պիտի դառնար, մէջ տեղ բան չէ երևում.
ամեն որ դպրոցի բացմանը օդնել խոստացողնե-
րը խօսում, աղբուկ են բարձրացնում, և ցրվում
Կորսնցից շատերը աւելի իրանք անձնական փա-
ռասիրութեամբ են հետաքրքրված, քան թէ զըպ-
րոց հիմնելու գործով: Դա պատիւ չէ բերում
Գօրիսի բազմաթիւ հայերին»:

ՏԱԹԵՒԻՑ մեզ գրում են. «Տաթևի հաշակաւոր
վանքի աւերակները վերանորոգելու հարցը էլի
մնում է միայն հարց: Վանքի եկամուտները՝ ան-
հոգութեան շնորհիվ շատ աննշան են դարձել:
Իսկ հանգանակութեամբ էլ դեռ մի աչքի ընկ-
նող գումար չէ հաւաքվել, որով կարելի լինէր
ձեռնամուկ լինել վանքի վերանորոգութեան
գործին, որը մեծ ծախսեր է պահանջում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՑԻՑ
Կ. Պոլիս, 20 յունուարի

Յունուար 14-ին Մանդուկի Էֆենբար և Հն-
բեդի Շարպիէ տաճկաբարբառ թիւրքերը ամ-
սուան մը համար դաղաբաման դատապարտուեցան
կրօնական վէճերու պատճառաւ:

Մանդուկի Էֆենբար և նրա խմբագիր պ.
Կարապետ Փանոսեան մեր այս վերջի երևուոն
տարիներու ամենէն հետաքրքրական դէպքերէն
մին կը ներկայացնեն. չեն յիշեր թիւրք մը, կամ
խմբագիր մը, որ այնքան հոգի և յարատեւ ժող-
վրդականութիւն շահած ըլլայ, որքան շահած
էին պ. Փանոսեան և իր թիւրքը. և անկումն ալ
այնքան մեծ եղած է. և սակայն իր անկմանը
մէջ իսկ պ. Փանոսեան պահած է հաստատ բա-
րեկամութիւններ և ընթերցողներու փոքրիկ
խումբ մը, որոյ չնորհիս իր ապաշխարանքի տա-
րիներուն մէջ—որ ժողովուրդապէս տարբ տարի
զաւ, կարող եղած է դիմանալ:

Տղայութեան օրերու իբր անյիշել յիշատակնե-
րէն մին մնացած է իմ մոքիս մէջ այն գումա-
րումները, որք տուններու մէջ կըլլային և այն
ատեն բոլոր տղայները միայն Մանդուկի
վրա կը խօսէին, որ բարոյական մեծ ոյժ մ'էր.

յետոյ երբ դպրոցէն ելայ, ամենուն ձեռքը միա-
այն Մանդուկի կը տեսնէի: Ամեն կողմ Ման-
դուկի և Փանոսեան. աղջային իշխանութիւն կը
զողար անոնցմէ. յանդուգն և համարձակախօս
էին թիւրք ու խմբագիրը. Մանդուկի օրը
երկու անգամ մինչև կը տպուէր և հաղաւոր
օրինակներ: Մանդուկի և պ. Փանոսեանի
պատմութիւնը 1878 թուականին եթէ զրուի, պի-
տի համարուի իբր առաջնական վէպ մը, հա-
մեմատելով մեր այժմու բարձրեւոր: 1878 թուա-
կանին վերջն էր, որ Մանդուկի հակառակելով
Ներսէս Պատրիարքին ունեցաւ ահաւելի անկում
մը, յորմէ կարող չեղաւ վերականգնել մինչև այս
վերջին ամիսներն, յորում սկսաւ աւելի լաւ ըն-
դունելութիւն գտնել և քիչ մը աւելի աղատ
չնչել և յառաջադիմելու ճամբուն մէջ մտած),
բայց կարծենք բարոյապէս շատ տկարացած:
Կերելի թէ Պոլիս իր քաջակերութիւնը միայն այն
թիւրքերուն կուտայ, որք ալ ևս յոգնած են կամ
լաւ գիտեն:

Արդարև յորմէհետ մենք խելահաս եղանք
1876 թականին ի վեր, Մանդուկի համակող-
ներէն չենք և Մշակի մէջ ալ քիչ անգամ ա-
ռիթ ունեցած ենք խօսել այդ թիւրքի մասին:
Նախատիւնը, հայոյանք գլխաւոր այդ թիւրքի
դէմքերն էին, և տարբ տարբ քաղաքաւոր մեզ դէմ
նախատական ածականներով և հայոյութիւննե-
րով գրած է:

Սակայն այսու հանդերձ ոչ Մանդուկի, ոչ
պ. Փանոսեանի թշնամի չէինք կրնար ըլլալ.
վասն զի կը տեսնէինք թէ ինչպէս հրապարակա-
գիրներու դէմ կը դրէ—ինչ որ երկրորդական
բան մը կը համարէինք—շատ աւելի կծու, շատ
աւելի նախատական ոճով կը գրէր այնպիսի ան-
ձերու դէմ, որք շատ հարուստ, շատ բարի դիրք
ունեցող կը համարուին: Մեր համոզմամբ պ.
Փանոսեան որոշ ուղղութեան մը կը հետևէր.
քննադատական ուղղութիւնը և ինչպէս պարզ
հրապարակագիրներու հետ կը վարուէր, նոյնը
կընէր նաև մեծ-մեծ համարուածներու հետ, ու-
րեմն նա մի վատողի չէր, որ քննէր մեծ-մեծնե-
րու առջև և հարուածէր միայն հրապարակագիր-
ները: Բայց թէ իր հայոյութիւնները, թշնամու-
թիւններն ու նախատիւնները անգործ էին հրա-
պարակագիրներու դէմ, թուի թէ բաւական
ծանր հարուածներ էին հարուստներու և մեծ-
մեծ-մեծներու դէմ.—ի հարկէ բոլոր հարուստները
մեծ-մեծները չեն. հրապարակագիրները միշտ նե-
րողամիտ կամ լաւ ևս արհամարհող երեցան,
իսկ միւսները քննախնդիր:

Որքան ալ անվայել ոճ մը ունենար Մանդու-
կի, որքան ալ անբաղաքաւոր և բոլորովին ան-
կիրթ հանդիսանար պ. Փանոսեան իր գրութիւն-
ներու մէջ—կանխարկենք վերջի տարիներու գրու-
թիւնները—այսու հանդերձ շատ բան կը ներուէր
իրեն, վասն զի իր այդ ուղղութիւնը կեղծաւորի
ուղղութիւնն էր: Աւելի լաւ է մարդասպանի մը
հետ գործ ունենալ, քան թէ կեղծաւորի. ո՞ն է
հայոյի, կոպիտ, անկիրթ մարդ լաւագոյն է,
քան քաղցրաւեղու, գեղածիծաղ, բարեկիրթ, բայց
կեղծաւոր անձ.—(ի հարկէ, բնիւր հարկ չը կայ,
թէ քաղցրաւեղու, գեղածիծաղ, բարեկիրթ ու
միանգամայն անկեղծ ըլլալը լաւագոյն է և ինչ
որ շատ հնարաւոր է) արդ պ. Փանոսեան իր բո-
լոր կոպտութեան մէջ միշտ անկեղծ երեցած էր.
կոպիտ, բայց անկեղծ մարդ՝ վտանգաւոր չը
կրնար ըլլալ. վտանգաւորը կեղծաւորն է—աչ-
խարհիս ամենէն զգուշի արարածը—հետեւաբար
Պ. Փանոսեանի դէմ, իբր հրապարակագիր, թըշ-
նամութիւն չենք կրնար ունենալ:

Բայց այժմ, որ լաւ ճամբու մէջ մտած է,
ինչպէս այստեղ կըստի, Մանդուկի պիտի փո-
խէ իր ուղղութիւնը, հաճոյալիկապէս պիտի լինի
թէ իր ուղղութիւնը պիտի շարունակէ միայն
խօսելու եղանակ փոխելով—վասն զի անկեղծ
ըլլալու միակ պայմանը հայոյութիւնը ընել չէ:
ընդհակառակը, շատ քաղաքապետութեամբ կարե-
լի է քննադատ և անկեղծ ըլլալ—Վերջի մի քա-
նի ամիսներու մէջ Մանդուկի այնքան անգամ
զոգուեցաւ, որ կարելի չէ որոշ բան մը ըսել.
բայց շատ տխուր պատկեր մը պիտի ըլլայ, եթէ
կըսենք, որ իր ներստանով ընթացք չեղի և նախատիւնը
Պոլսոյ հայոց պիտի ըլլայ, ուր այն ժամանակ
միայն զօրավիղ կըլլայ թիւրք մը, երբ նա խո-
նարիլ և կեղծել գիտնայ:

Պապի կոնդակի առթիւ է, որ Մանդուկի սկը-
սաւ ընդունելութիւն գտնել ժողովրդէն: Կրօնա-
կան վիճաբանութիւններէ շարիթեւոր մասնա-
ւանդ թէ շատ ձանձրոյթ զգալով, ոչ Մանդու-

կի, ոչ ուրիշ թիւրքերու գրածները կարդացած
եմ, հետեւաբար Մշակի ընթերցողները թող նե-
րողամիտ գտնուին, եթէ կարող չենք ընդարձակ
գաղափար մը տալ այդ վէճերու մասին:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յրանց-Յովսէփ կայսրը հրատարակեց մի մա-
նիֆէտ, որով շնորհակալութիւն է անում աւստ-
րիական ազգերին՝ Ռուզօֆի մահվան առիթով
նրանց արտայայտած համակրական զգացմունքների
համար: Դրա հետ միասին կայսրը գովում է այդ
նոյն առիթով աւստրիական լրագիրների ցոյց
տուած հայրենասիրական զգացմունքները:

Վիէնայից հեռագրում են, որ եղուիտ հո-
գեորականները հրաժարվեցան հոգեհանգիստ կա-
տարել Ռուզօֆի յիշատակին,—և այդ բանը ընդ-
հանուր զայրոյթ առաջ բերեց եղուիտների
դէմ:

Ունգարայում ժողովուրդը ահագին դիմա-
դրութիւն ցոյց տուեց զինուորական նոր օրինա-
գծին և կառավարութիւնը այնքան խելացի դառ-
նաց, որ ի նկատի ունենալով ժողովրդի պահանջ-
ները, վճռել է մի քանի փոփոխութիւններ անե-
լու զինուորական օրինագիծերի մէջ:

Լոնդոնից հեռագրում են, որ մինիստրութիւ-
նը իր առաջնակարգ հարցերից մէկն է չինել երկ-
րի պաշտպանողական ոյժերը մեծացնելու խնդի-
րը. մինիստրութիւնը մտադրութիւն ունի թէ ծո-
վային զինուորների թիւը մեծացնելու և թէ Անգ-
լիայի ծովայինայ ամրոցները աւելի ամրացնելու:

Գերմանական մի քանի լրագիրներ հաղոր-
դում են հետեւեալ, որք է չինու, լուրը,
այն է, որ երբ Ռուզօֆ լսել է բաւական
թաղաւոր լուրջութիւն մանր, բացականչել է. «Վա-
խենում եմ, որ ինձ հետ էլ նոյնը կը պատահի»:

Թագաժառանգ Ռուզօֆի մահվան մասին
շարունակում են ամեն տեսակ ենթադրութիւն-
ներ անել: Վիէնայում շատ տեսակ լուրեր են
տարածված Ռուզօֆի սիրահարական արկածների
մասին: Ասում են, որ Ռուզօֆ սիրահարված է
եղել մի շատ հին իշխանական տան պատկանող
օրիորդի վրա, որի հետ նա մօտիկ յարաբերու-
թիւններ ունէր, և իբր թէ Ռուզօֆ մեծամար-
տութիւն է ունեցել այդ օրիորդի երբօր հետ, ո-
րից և մեռել է: Լուր կայ, որ Ռուզօֆ յարաբե-
րութիւններ է ունեցել բարձր դատաւարդին պատ-
կանող և մի ուրիշ կնոջ հետ: Մի խօսքով Վիէն-
այում ամեն տեսակ լուրեր են պտտում թագա-
ժառանգի սիրահարական արկածների մասին, և
շատերը պնդում են, որ այդ պատճառով Ռուզօֆ-
ֆի և իր ամուսին Սաֆիանայի յարաբերութիւն-
ները շատ լարված էին, որ իբրեւ թէ Սաֆիանան
շատ անգամ ցանկացել է թողնել իր ամուսնուն
և հեռանալ նրանից: Թագաժառանգի և իր ա-
մուսնու մէջ մի քանի անգամ այդ առիթով կռիւ
է պատահել, և կայսրը միայն կարողացել է հա-
մողկ նրանց վերջ տալ այդ անպատեալի տա-
րածայնութիւններին: Վիէնայից հեռագրում են,
որ իբրեւ թէ լսելով իր ամուսնու նոր անհաւա-
տարմութեան մասին, թագաժառանգուհին գրել
է նրան, որ ինքը վճռել է բաժանվել նրանից, և
որ իբրեւ թէ ստանալով այդ նամակը Ռուզօֆ ի-
րան սպանել է: Սակայն այդ բոլոր լուրերն էլ
միայն լուրեր են:

Այս օրերս առիթ ունեցանք տեսնելու թա-
գաժառանգ Ռուզօֆի պատկերը. նա բաւական
համակրելի դէմք ունի, բայց ճակատ, փոքրիկ մի-
րուք, երկար բեկներ: Հանգուցեալ թագաժառան-
գի դէմքի արտայայտութիւնը ընդհանրապէս շատ
խելացի և գրաւիչ է:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաքական դժբաղդութիւն է պատահել....
Իշխան Բիւսմարկի «Տիւրա» անունով շուէր, որը
կանցների անբաժան ընկերն էր, ստուկել է: Եւ-
րոպական մի քանի ծաղրական թիւրքեր այդ
դժբաղդութիւնը պատճառ են համարում իշխան
Բիւսմարկի տրամադրութեան վատանալուն....

Փարիզի համաշխարհային ցուցահանդիսի ժա-
մանակ, ինչպէս հաղորդում է «Figaro» լրագիրը,
պիտի գումարվի կ ան անց կ օ ո գ ր է ս:

Նորերում, երբ Գաւիայում բացվում էր պար-
լամենտի նստաշրջանը, կանայք ներկայացրին մի
խնդրագիր, 20 հազար ստորագրութիւններով ու-
րով պահանջում են ընտրողական իրաւունք տալ
կանանց: Առհասարակ կանանց հարցը արագ
քայլերով է առաջ գնում Գաւիայում: Վերջերս

էլ Կոպենհագենում բացվել է մի «սօցիալական-քաղաքական» դպրոց կանանց համար, ուր, ի միջի այլոց, աւանդում է իրաւաբանութիւն, հոգեբանութիւն, քաղաքական պատմութիւն և այլն:

Ամերիկայում նորերս կազմակերպւել է մի անհատ, որի նշանաբանն է՝ «Կորսի հիւանդութիւնը և մահը»: Այդ անհատը պատկանում էր բժշկութիւն չէն ընդունում, և դրանց բժշկութեան սխալման «հաւատով բժշկելու» սխալման է: Այդ անհատը ինչ պատկանողները համոզված են, որ ամեն մի հիւանդութիւն, ինչպէս չար ոգի, կարելի է հաւանդել հաւատով: Բայց մի քանի անգամ է, որ երբ այդ անհատները տեսնում են, որ այս կամ այն հիւանդութիւնը, օրինակ տիֆ, թոքերի բորբոքում և այլն, հաւատով չէ բժշկվում, մեղադրում են հիւանդին, ասելով՝ չես չէ խոստովանվում, որ ճշմարիտ հիւանդութիւնը գոյութիւն չունի, կամ ուրիշ խօսքով՝ այդ անհատները ուզում են, որ մահամերձ հիւանդը միշտ հաւատայ թէ ինքը հիւանդ չէ... Հիւանդութիւնը, որպէս կարծիքով զրգուլած երեակայութեան արգասիք է...

Այժմ Եւրոպայում կոյրերի թիւը հասնում է 300 հազարի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄՈՒՑՆԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐԻՉ, 1 փետրվարի: Այստեղ բնակվող մաքարաշա Դուլին-Սինդ հրատարակել է մի հրատարակ, հնդկ ժողովրդին և տեղական մեծերին ուղղած, որի մէջ նա յայտնում է, որ Եւրոպայի և Ամերիկայի իր կողմնակիցները պատրաստ են կազմակերպվել՝ Բրիտանական իշխանութիւնը տապալելու համար Հնդկաստանում: Դրա համար, մաքարաշայի խօսքով, հարկաւոր է 4 միլիոն ֆունտ ստերլինգ: Մաքարաշայն յայտ է դնում 43,000 պէնսիլվանիայի և իրանդացիների վրա, որոնք ծառայում են անգլո-ամերիկական զորաբանակում:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 փետրվարի: Ճանապարհորդ Ե-լիսէի հաղորդում է «Новое Время» լրագրում, որ հայր Պալիսի այժմ քարվան է կազմում Տաշկընտ, Անկար և Երզրում: Նա համարում է, որ Եւրոպայի և Ամերիկայի իր կողմնակիցները պատրաստ են կազմակերպվել՝ Բրիտանական իշխանութիւնը տապալելու համար: Նա համարում է, որ Եւրոպայի և Ամերիկայի իր կողմնակիցները պատրաստ են կազմակերպվել՝ Բրիտանական իշխանութիւնը տապալելու համար:

ՓԱՐԻՉ, 2 փետրվարի: Սենատը 228 ձայների առաւելութեամբ ընդունեց 52-ի ընդունեց չլինողներով ընտրութիւն անելու սխալման վերականգնելու:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 փետրվարի: Ձինտարական օրինագծի հակառակորդներին հանգստացնելու համար, կառավարութիւնը մտադրութիւն ունի զինում անելու ոչ թէ միայն 10-օրը յօդուածի վերաբերմամբ, համաձայնելով որ նորակոչների քանակութիւնը օրօշմի տասն տարին մի անգամ, բայց և 25-օրը յօդուածի վերաբերմամբ, թող տալով նր պահանջի օֆիցերներին քննութիւնը ունեցողական լեզուով տրվի: Բայց և այնպէս ուսանող երիտասարդութեան մէջ յօդուածը շարունակվում է:

ԼՈՆԴՈՆ, 2 փետրվարի: «Բէյտերի գործակալութեան» հեռագրում են կարկառու իրերի վերաբերմամբ: Ստանդարտը, Արդարահամարանի զէպի Ռուսաստանի ունեցած իշխանական յարաբերութիւններին վերաբերող Պետերբուրգի լուրերին այստեղ չեն հաւատում: Աւելանալու է ստացվում է:

ՓԱՐԻՉ, 2 փետրվարի: «Neue Freie Presse» լրագրի լուրերին նայելով, էմիլը դարձան կը վերադառնալ կարող, և ապա կայցելէ Կան-դահար:

ՓԱՐԻՉ, 2 փետրվարի: «Neue Freie Presse» լրագրի լուրերին նայելով, էմիլը դարձան կը վերադառնալ կարող, և ապա կայցելէ Կան-դահար:

ՓԱՐԻՉ, 2 փետրվարի: Պետպաշտօնական առողջապահութեան ընկերութեան մէջ պրոֆեսոր Բոգոսլուպի կարծիք յայտնեց, որ հարկաւոր է հիմնել յատուկ դեղատարական ինստիտուտ, յայտնելով որ այդ նպատակի համար կարելի է օգտվել համալսարանական գեղատնից, որի համար և ուսումնական չլինող հոգաբարձութիւնը համաձայնութիւն է տուել: Այդ բանը դուրս բերելու համար հարկաւոր 5,000 ֆունտ կարելի է հաւաքել հանգանակութեամբ: Ընկերութիւնը համաձայնեց պրոֆեսորի մտքին հետ և վճարեց թոյլտւութիւն ինքնին:

ՓԱՐԻՉ, 3 փետրվարի: Պետպաշտօնական ժողովում տեղի ունեցան վիճարանութիւններ սահմանադրութեան վերաբերման վերաբերմամբ: Այսպիսով կուսակցութիւնը պնդում էր Ֆլուկէի պահանջման հակառակ, որ վիճարանութիւնները յետաձգվեն: Ժողովը որոշեց յետաձգել: Այն ժամանակ Ֆլուկէ յայտնեց որ մինիստրութիւնը հրաժարական է տալիս: Այդ հրաժարականը անակնկալ մի բան էր ժողովի համար: Ֆլուկէ առաջացրեց յայտնեց որ վիճարանութիւնները յետաձգման հարցի առթիվ նա վստահութեան հարց կառավարի և ժողովի ծախսարկման ու աշխատանքի կուսակցութիւնը անտեղեկ էր ձայնատուութեան հետեւնքի մասին. Գետաձգում պահանջողները մեծ մասամբ բաղկացած էին աշխատանքից և օպորտունիստներից: Ժողովի նիստից յետոյ արմատական, աշխատանքի և ծայրայեղ ձայնակողման կուսակցութիւնները, խորհրդակցելով իրար մէջ, որոշեցին ընդհանուր համաձայնութեամբ ուղարկել իրանց միջին ընտրվածներին Ֆլուկէի մօտ, արտա-յայտելու նրան ցաւակցութիւն, մինիստրութեան հրաժարականի մասին և շնորհակալութեամբ նրա գործողութեան հաստատման եղանակի համար: Այս բոլորն նախագահ Կարնո խորհրդակցում է պատգամաւորների ժողովի նախագահ Մէլինի հետ, որին, ինչպէս լսվում է, Կարնո կը յանձնի կազմակերպել նոր մինիստրութիւնը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԿՈՂՄԵՑ

ՓԵՏԵՐԲՈՐԳ, Ռուսաստանի, Արդարահամարանի զէպի Ռուսաստանի ունեցած իշխանական յարաբերութիւններին վերաբերող Պետերբուրգի լուրերին այստեղ չեն հաւատում: Աւելանալու է ստացվում է:

ՓՈՒԼՅԷԼԻ, Ռուսաստանի, Արդարահամարանի զէպի Ռուսաստանի ունեցած իշխանական յարաբերութիւններին վերաբերող Պետերբուրգի լուրերին այստեղ չեն հաւատում: Աւելանալու է ստացվում է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ВЪ ЖИРАДОВСКОМЪ СКЛАДѢ

Тифлисъ, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦРУНИ.

ԺԻՐԱՐԴՈՎՍԿՈՄ ՊԱՆԿՏՈՍ

Գործողայա փողոց ՆԱԽԻՆ ԱՐՄԻՆԻՆԻ քարավանսարայում Ստացված են

ՊԱՏՐԱՍ ԲԵՆԶԷՆՏԵՐ ամեն տեսակ չափերի

10—10 (2)

ԴՈՆԵՐ և ԼԵՅՑ

ՄԻ ՀԱՄԵՍ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ ընդունում է զինքնօրինակ և կիսազին-
րօրինակ 8-ից մինչև 13 տարեկան երեխաների:
Հարցնել վանքի փողոց փողոց № 5.

10—10 (6. 2)

1889 թիւն Կ. ՊՈԼՍՈՒՄ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ

Ս. Ր. Ե. Ե. Լ. Ք.

Քաղաքական և ազգային լրագիր: Տարեկան բաժանորդագինն է օտար երկրների համար 96 ֆր. վեց ամսեայ 28 ֆրանկ:
Հասցեն. Direction du journal «AREVELK» Noradounghian Han, Galata Constantinople.

Բժշկական Աւետիք Մ. Բարաբյան խորին սուգով յայտնում է իր սիրեցեալ հօրեղբորդի՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈԲՅԱՆ ԲԱՐԱՅԵԱՆԻ վաղաժամ մահը, որ տեղի է ունեցած ամսիս 1-ին Ալեքսանդրապոլում, խնդրում է հանգուցեալի յիշատակը յարգել կամեցող բարեկամներին և ծանօթներին ներկայ լինել. հոգեհոգստեան, որը կը լինի Քամոյենց եկեղեցում, կիրակի օր, փետրվարի 5-ին, պատարագից յետոյ ժամը 12-ին:

1—1

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱՐԻՍՏՈՐ ՈՄ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԻՆԻՑ-ՀԱՅԵՐԻՆ ԲԱՌԴԻՐԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 րուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԷՍ ԽԻՂԻԿԷԼԻ և ընկ. գրավաճառանոցում, Թիֆ-
լիս, Գոյովինսկի Պրոսպեկտ, առաջին Գրինազիայի հանդէպ: 32—40

ՊԱՏՐԱՍ Ե ՏՊԱԳՐՈՒԹԱՆ ՀԱՄԱՐ

ՏԱՆՏԻԿԻՆ ԵՒ ԽՈՀԱՆՈՑ

Վերնագրով գրքը՝ կերպուհների, քննարկների և տնտեսական գիտելիքների հարուստ բովանդակութեամբ, պարունակում է իր մէջ 300-ի չափ բազմաթիւ կերպուհներ պատրաստելու եղանակ թէ ասիական և թէ եւրոպական: Գրքը կը լինի բաւական մեծ զրբով՝ 300 երեսա-
չափ:

Բացված է բաժանորդագրութիւն: Բաժանորդագինն է 1 րուբլի իսկ, տպագրելուց յետոյ կար-
ծենայ 1 րուբլի 50 կօպ:

Կարելի է գրվել բոլոր գրավաճառանոցներում, իսկ գրքի կազմողին պէտք է դիմել. Тифлисъ, Якову Меликъ-Бахтаманцу, въ типографію Мартыросянца.

2—3

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГРУЗИНСКУЮ ЕЖЕНЕДЕЛЬНУЮ ИЛЛЮСТРИРОВАННУЮ ГАЗЕТУ

ТЕАТРЪ

НА 1889 Г.

Газета будет издаваться при болѣе благопріятныхъ условіяхъ.

Подписная цѣна газеты съ доставкой и пересылкой: на годъ 5 р. на полгода 3 р. От-
дѣльный номеръ 15 к. премія газеты «ТЕАТРЪ». На 1889 г., годовымъ подписчикамъ гру-
зинскій Стенной Календарь. изд. Г. Чарквіани. На 1889 г., Царипа Тамара, (большая олео-
графическая картина). Адресъ для иногородныхъ: Тифлисъ, редакция газеты «ТЕАТРЪ»
3—3 Редакторъ-издатель А. Неберидзе.

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՆԴԻԴԱՏ Ընկան գիտու-
թիւնների, կամենում է ԴՍՍԵՐ տալ: Հասցեն ՄՇԱԿԻ՝ խմբագրատանը կարելի է ի-
մանալ: 4—5

Բացված է բաժանորդագրութիւն «ԲԱՉՄԱՎԷՊ» հանդիսարանի

47-օրը տարի. 1889 Վենետիկ Ս. Ղազար

առաջիկայ 1889 տարւոյն «Բաղմալէպ» հանդիսարանի ուսումնական փոխանակ եռամսեայ լինե-
լու, ամեն ամսոյ սկիզբը երկերկու ութամսայ թերթիք ի լոյս պիտի ընծայուի: Տարեկան գինն է
10 ֆրանկ. Ռուսաստանի համար 4 րուբլի: Դանապարհի ծախսով. բաժանորդ գրուել ցանկացողը
կարող են դիմել ուղղակի խմբագրութեան. Venice, au couvent P.P. Mekhitaristes, S. Lazare.
կամ առ գործակալ մեր որ ի Տիֆլիս պ. Յովակիմ Չափալպաշեան:
Խմբագրութիւն «Բաղմալէպ» հանդիսարանի

4—5

ԲԱՅՈՒՄ Ե ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԱՅԻ

Գ. ՏԱՐԻ, 1889

Բաժանորդութեան գինն է՝ ճամբու ծախսով տարեկան 8 ֆր. — 4 ֆր. — 4 ֆր. խմբա-
գրութեան հասցեն է՝ Rédaction de la Revue «Hantess», Vienne (Autriche), VII. Mechitaristengasse
4, և կամ՝ Вѣ Вѣну (Австрія), редакция «Андесъ», Wien, VII. Mechitaristengasse 4.

Խմբագրութիւն որոշած է Հանդիսի Գ. Տարւոյն չըջանելու տասն օրինակ նուիրել ազգային
կարօտ վարժարանաց վիճակահանութեամբ: Այն վարժարանը որ կը բաղձան մամանցիլ վիճակա-
հանութեան, պէտք են վարժարանին վարժութեան կնքովն վաւերացեալ խնդրագիր մատուցանել
խմբագրութեան: Խնդրագիրը փոխով հասնելու են խմբագրութեան ձեռքն 1889 տարւոյ Հան-
դիսի Յունուար 1 թիւն ուղղակի խմբագրութեան կրնայ ընդունուիլ 2րի ուղարկելով 5 սանդ. —
10 փրկ — 2 կօպ. նամակագրուած:

3—3

Խմբագրութիւն «Հանդիսի»

ԿՈՇԿԱԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ԱՂԱՍԻ ՏԵՐ-ՉԱԲԱՐԵԱՆԻ

Գոյովինսկի, տուն Բէյտերի, № 11.



Ընդունում է կանանց և տղամարդոց ամեն տեսակ կոշիկնե-
րի պատէրներ, ՉԱԲԱՐԵԱՆԻ ԳՆԵՐՈՎ. պատրաստվում են շու-
տով: Պատէրները ընդունվում են խանութում. պատրաստե-
լուց յետոյ կարելի է ստանալ միայն խանութում. տուն չէ ու-
ղարկվում:

9—10